# ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 3

## Աշխատանքային գիրք-տետր



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 3

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

**Հանրակրթական ուսումնական հաստատությունների երրորդ դասարանի սովորողների համար**

**Երևան - 2025**

ՀՏԴ
ԳՄԴ

**«Ես և շրջակա աշխարհը 3» աշխատանքային գիրք-տետր** /Մանուկյան Մ. Ռ., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2025.– 88 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

**Մասնագիտական խմբագիր**՝ Լ.Ա.Մնացականյան

**Գրախոսներ՝**
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սարատիկյան Լ. Հ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.

**Հեղինակներ՝**
Մանուկյան Մարինե Ռաֆիկի, մանկավարժական գիտությունների թեկնածու
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի
Օհանյան Հասմիկ Վրույրի

**Խմբագիր՝** Սարգսյան Հ. Ա.

**Համակարգչային ձևավորում՝** Սարոյան Լ.Գ.

**Նկարիչ**՝ Մնացականյան Կ.Բ.

**Կարդում է**՝ Վահանյան Լ.Վ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երրորդ դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

# Նախաբան

«Ես և շրջակա աշխարհը 3» աշխատանքային գիրք-տետրը հասցեագրված է երրորդ դասարանում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին՝ ուսումնառությունը  հասանելի և մատչելի դարձնելու համար:
Աշխատանքային գիրք-տետրը կարող է օգտակար լինել նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցիչներին ու ծնողներին՝ աջակցելով  և ուղղորդելով նրանց արդյունավետ ուսուցման կազմակերպման գործընթացում:
«Ես և շրջակա աշխարհը 3» աշխատանքային գիրք-տետրում զետեղված բազմաբնույթ, հետաքրքրաշարժ առաջադրանքների հիմքում ընկած է ուսուցման ոչ միայն շտկող, այլև զարգացնող սկզբունքը:
Սույն աշխատանքային գիրք-տետրը կօգնի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին հեշտությամբ ներառվել  կրթական միջավայր՝ հաղթահարելով  ուսումնական դժվարությունները:

# ԵՍ ՈՒ ԻՄ ԳՈՐԾԵՐԸ

Կռահի՛ր հանելուկը:

Երբ որ ծնվում ենք, ի՞նչ են մեզ տալիս,
Որ ամբողջ կյանքում մեզ հետ է գալիս:

1. Փակցրո՛ւ նկարդ կամ նկարի՛ր քեզ: Գրի՛ր անունդ:



❖Քեզ ճանաչում են քո անունով:

2. Ի՞նչ գործեր ես կատարել օրվա ընթացքում: Փակցրո՛ւ (Հավելված 1):



3. Նայի՛ր նկարներին և նշի՛ր, թե ով ինչպես է անցկացնում իր ժամանակը: Փակցրո՛ւ համապատասխան նշանը (Հավելված 2):













4. Փակցրու՛ այն գործերի անվանումները, որոնք սիրում ես անել (Հավելված 3):



5 .Փակցրո՛ւ նկարները համապատասխան սյունակներում. ո՞րն է գործ, ո՞րը՝ ժամանց
(Հավելված 4):
Կատարի՛ր ըստ օրինակի:

Գործ՝



Ժամանց՝



| Գործ | Ժամանց |
| --- | --- |
| | |

6. Ինչպե՞ս անցկացնել հանգստյան օրն ընկերների հետ:

ա) Պատասխանի՛ր հարցերին՝ համապատասխան նկարի կողքին նշում կատարելով:

## Ո՞ւր եք գնալու:

Կավագործություն



Կինոդիտում



Պլանետարիում



# Ինչո՞վ  եք տեղ հասնելու:

մետրո



☐

ավտոմեքենա



☐

ավտոբուս



☐

## Որքա՞ն ժամանակ եք անցկացնելու  այնտեղ:

1 ժ ☐

2 ժ ☐

3ժ ☐

7. Կարդա՛ պատմությունն ու պատասխանի՛ր հարցերին:

## Համառ մրջյունը

Կ. Սուխոմլինսկի

Մրջյունը ճանապարհին գտնում է դդմի մի կորիզ: Մեջքին է առնում կորիզը, բայց չի կարողանում պահել: Կորիզն անընդհատ սահում էր ու ընկնում: Մեկ էլ մրջյունը լսում է ճպուռի քրքիջը.

- Հազար անգամ կորիզը բարձրացրի՛ր՝ ընկավ, տեսնում ես՝ բան դուրս չի գալիս:
- Ես սիրում եմ իմ գործն ավարտին հասցնել - հանգիստ պատասխանեց մրջյունը:

1. Ասա՛/նշի՛ր՝ որ միջատի մասին էր պատմությունը:

ա. թիթեռի
բ. մոծակի
գ. մրջյունի

2. Ասա՛ որ միջատին հավանեցիր:
ա. մրջյունին
բ. ճպուռին

3. Ավարտի՛ր նախադասությունը՝ փակցնելով ճիշտ տարբերակը (Հավելված 5):

Մրջյունը հասավ հաջողության, որովհետև ...

Սովորի՛ր անգիր:

**Ով աշխատի, նա կուտի:**

8. Նշի՛ր օրակարգի ճիշտ հերթականությունը. գրի՛ր գործողությունները:








1.արթնացա












9. ա ) Փակցրո՛ւ շաբաթվա օրերի անվանումները (Հավելված 6):



բ) Ասա՛/գրի՛ր շաբաթվա ընթացքում քո կատարած ամենակարևոր գործի մասին:

________________________________________

________________________________________

________________________________________

10. Նշի՛ր աղյուսակում, թե որ օրն ինչ ես անում: Դի՛ր՝ « + » կամ « - » նշանները:

| | Երկուշաբթի | Երեքշաբթի | Չորեքշաբթի | Հինգշաբթի | Ուրբաթ | Շաբաթ | Կիրակի |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դաս | | | | | | | |
| Գործ | | | | | | | |
| Խաղ | | | | | | | |
| Զբոսանք | | | | | | | |
| Հեռախոս | | | | | | | |
| Հեռուստացույց | | | | | | | |

11. Ունկնդրի՛ր բանաստեղծությունը: Վերջին տողը սովորի՛ր անգիր:

## ԺԱՄԱՆԱԿԸ ՈՍԿԻ Է

Իմ պապիկը գործասեր
Ամեն անգամ ինձ կասեր՝
Թե դաս ունես՝
Սովորիր,
Թե գործ ունես՝
Կատարիր,
Օրը կանցնի, կգնա,
Ինչ որ չանես, կմնա:
Եվ մի օր էլ կտեսնես՝
Ուրիշներից հետ կընկնես...
Ուշքդ վրադ միշտ պահիր,
Ժամանակդ խնայիր:
Զուր վայրկյան մի՛ կորցրու,
Ում որ կուզես՝ հարցրու.
Աշխարհը մի խոսքի է՝

**Ժամանակը ոսկի է:**

12. Համեմատի՛ր:

**Հանգստյան օր**





## Աշխատանքային օր





13. Գործողությունները համապատասխանեցրու՛ ժամացույցի նկարներին:




















14. Նկարի՛ր ժամացույցի սլաքները քո օրվա ռեժիմին համապատասխան:
















15. Գրի՛ր/ցույց տո՛ւր, թե ինչ ես ուզում դառնալ:



**Ճանաչենք մեր մարմինը**

16. Ասա՛ և ցո՛ւյց տուր. մարմնի ի՞նչ  մասեր ես տեսնում:

Մեր աչքերը, ականջները, քիթը, լեզուն, մաշկը օգնում են մեզ ճանաչելու մեր շրջակա աշխարհը:



**Սրանք քո  օրգաններն են:**



17. Գրի՛ր /փակցրո՛ւ մարմնի մասերի անվանումները (Հավելված 7):
















18. Ըստ տրված օրինակի նշի՛ր, թե որ զգայարանով ինչ ենք անում:

| |  |  |  |  |  |
|---|---|---|---|---|---|
|  | ✓ | ✓ | ✗ | ✓ | ✓ |
|  | | | | | |
|  | | | | | |
|  | | | | | |
|  | | | | | |
|  | | | | | |
|  | | | | | |

19. Ծեփոնով ստացի՛ր մարդուկի կերպարը:





20. Լրացրո՛ւ/փակցրո՛ւ մարդու զգայարանների անվանումները համապատասխան տեղերում (Հավելված 8):



21. Փորձ





22. Ուսումնասիրի՛ր ջրի շրջապտույտը բնության մեջ:



❖ **Ջուրը կյանքի աղբյուր է:**

23. Օգտվելով նկարներից՝ ասա՛, թե ինչի համար կարող ենք օգտագործել ջուրը:



Սովորի՛ր անգիր. «Ջուրը կյանք է»

24. Նշի՛ր՝ ջրային որ սպորտաձևն ես հավանում: Դիր՝ «+» նշանը համապատասխան տեղում:







# ԻՄ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

25. ա) Անվանի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:




















բ) Ասա/գրի՛ր մեկ բառով. ի՞նչ է կոչվում նկարների ամբողջությունը:

26. Դիտի՛ր գծակարգը, օգտվելով դրանից՝ ներկայացրո՛ւ:

**ՍՆՆԴԱՄԹԵՐՔ**

| ԲՈՒՍԱԿԱՆ | ԿԵՆԴԱՆԱԿԱՆ |
| --- | --- |






Պետք է օգտագործել բազմազան սնունդ:

27. Դիտի՛ր զամբյուղը:

Գրի՛ր/փակցրո՛ւ   համապատասխան սյունակներում:



| Միրգ | Բանջարեղեն |
| --- | --- |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |

28. ա) Աննան փակցրել է միայն մրգերի նկարներ. ճի՞շտ է Աննան:



Նշի՛ր ճիշտ տարբերակը:

ա. այո

բ. ոչ

բ) Նկարի՛ր ճիշտ տարբերակը:

29. ա) Կարդա՛ /ունկնդրի՛ր հանելուկները:

Նշի՛ր ճիշտ պատասխանը:

Մենք հատիկով չենք աճում,

Ընտանիքով ենք լինում,

Կարմիր, սպիտակ գույն ունենք,

Անուշ, քաղցր համ ունենք:





Ունի մեկ ոտք,
Չունի կոշիկ,
Ունի գլխարկ,
Չունի գլխիկ:





Թագուհին է նա մրգերի,
Դուրսը՝ կարմիր, ներսը՝ կարմիր,
Գլխին ունի փոքրիկ թագ,
Ներսում՝ հատիկ շատ-շատ-շատ:





բ) Պատասխանները նկարիր և գրիր՝ մի՞րգ է, թե՞ բանջարեղեն:

30. Ամբողջացրո՛ւ նկարները՝ փակցնելով համապատասխան պատկերները։

Շրջագծի՛ր այն մթերքները, որոնք շատ ես սիրում (Հավելված 9)։













31. Փակցրու՛ համապատասխան նկարը և գրի՛ր (Հավելված 10):

ա) Ի՞նչ է կոչվում սննդի ընդունումն առավոտյան:

______________________________

բ) Ի՞նչ  է կոչվում սննդի ընդունումը կեսօրին:

______________________________

գ) Ի՞նչ  է կոչվում սննդի ընդունումը երեկոյան:

______________________________

32. Օգտվելով նկարից՝ հավաքի՛ր քո «առողջ ափսեն» (Հավելված 11):



Նախաճաշ



Ճաշ



Ընթրիք



33.ա) Նշի՛ր քո  նախաճաշելու ժամը՝ ժամատախտակի վրա սլաքներ նկարելով:




բ) Լրացրո՛ւ:

Ես նախաճաշում եմ ժամը __________-ին:

34. ա) Ժամատախտակի վրա սլաքների օգնությամբ նշի՛ր քո  ճաշելու ժամը:




բ) Լրացրո՛ւ:

Ես ճաշում եմ ժամը __________-ին:

35. ա) Ժամատախտակի վրա սլաքների օգնությամբ նշի՛ր քո  ընթրելու ժամը:




բ) Լրացրո՛ւ:

Ես ընթրում եմ ժամը __________-ին:

36. ա)  «Պատրաստի՛ր ապուր», որի բաղադրության մեջ լինեն և՛ բուսական, և՛ կենդանական ծագման մթերքներ:

Նշի՛ր  մթերքները, որոնք կօգտագործես «ապուրը պատրաստելիս»:

- ☐ կարագ
- ☐ սոխ
- ☐ կանաչի
- ☐ կարտոֆիլ
- ☐ բրինձ
- ☐ գազար
- ☐ լոբի
- ☐ ոսպ
- ☐ միս
- ☐ հավի միս



բ) Կազմի՛ր / գրի՛ր քո «եփած ապուրի» բաղադրատոմսը:

37. Փակցրու՛  «մթերքներ»  և ստացի՛ր առողջ և անառողջ սնունդ ընդունող մարդուկներ: Նկարի՛ր համապատասխան դեմքերը (Հավելված 12):





38. ա) Ուշադիր դիտի՛ր նկարները. տե՛ս՝ սեղանի մոտ ինչպես պետք է ճիշտ բռնել գդալը, դանակը և պատառաքաղը:







բ) Ցո՛ւյց տուր գործողությունները:

գ) Հետևի՛ր կանոններին.

- ✓ ուտելուց առաջ լվա՛ ձեռքերդ,
- ✓ կե՛ր անշտապ, սնունդը երկար ծամելով,
- ✓ սնունդը ընդհանուր ափսեից ձեռքով կամ քո պատառաքաղով մի՛ վերցրու,
- ✓ ուտելու ժամանակ և ուտելուց հետո անձեռոցի՛կ օգտագործիր:

39. Պատկերացրու՝ հիմնում ես փոքրիկ սրճարան.

- նկարի՛ր սրճարանը,
- գրի՛ր սրճարանի անունը,
- կազմի՛ր «առողջ ճաշացանկ»:

40. ա) Պատրաստվի՛ր զբոսախնջույքի (պիկնիկի). դիտի՛ր նկարը և պատասխանի՛ր հարցերին:

- ո՞ւմ հետ կգնաս պիկնիկի,
- ի՞նչ սնունդ կվերցնես  քեզ հետ,
- որքա՞ն ժամանակ կանցկացնես բնության գրկում,
- ինչո՞վ կզբաղվես:



41. ա) Փակցրու՛ նկարները համապատասխան տեղերում (Հավելված 13):



42. ա) Կարդա՛ / ունկնդրի՛ր հանելուկը: Կռահի՛ր պատասխանը:

Ոչ լսում է, ոչ խոսում,

Ոչ զգում է, ոչ տեսնում,

Սակայն նա մեզ բոլորիս

Ճանապարհն է ցույց տալիս:





**Լուսացույց**

բ) Դիտի՛ր նկարները: Ցո՛ւյց տուր համապատասխան գործողությունները:



Վառվում է լույսը՝ անցի՛ր:



Վառվում է լույսը՝ ուշադի՛ր եղի՛ր:



Վառվում է լույսը՝ կանգնի՛ր:

43.ա) Ներկի՛ր լուսացույցը համապատասխան գույներով:



բ) Ասա՝ որ գույնն ինչ է քեզ հուշում:

44. ա) Արի՛ զրուցենք.

- Ի՞նչ արարք են կատարել երեխաները:
- Ի՞նչ կարող է պատահել յուրաքանչյուր դեպքում:

բ) Ցո՛ւյց տուր քո վերաբերմունքը համապատասխան նշանով:













45. Սլաքով համապատասխանեցրու. ո՞ր դեպքում ո՞ր ծառայությանը պետք է դիմել:



**1-02**





**1-03**





**1-04**





**911**



46. Լրացրո՛ւ աղյուսակը՝ փակցնելով  նկարները համապատասխան սյունակներում

(Յավելված 14):

| **Վատ սովորություն** | **Լավ սովորություն** |
|---|---|
| | |

47. Օգտվելով նկարներից՝ ասա/գրի՛ր համապատասխան բառը:

Համակարգչի առջև շատ ____________________________________ :



Չուտել անառողջ __________________________________________ :



Լինել ֆիզիկապես __________________________________________ :



48. Արի հիշե՛նք.

օրվա կանոնավոր ռեժիմ ունենալ,
քնել ժամանակին,
լինել մաքրասեր, կոկիկ,
ուտելուց առաջ լվացվել,
առավոտյան և երեկոյան ատամները լվանալ և լվացվել,
եղունգները ժամանակին կտրել,
եղունգները չկրծել,
ակտիվ լինել, շատ շարժվել,
մաքուր օդում զբոսնել,
առավոտյան և երեկոյան մարզվել,
օգտագործել առողջ  և բազմազան սնունդ:

# ԵՍ ԵՎ ՄԱՐԴԻԿ

## ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԸ

49. ա) Կարդա՛ կամ ունկնդրի՛ր բանաստեղծությունը:

ԵՐՎԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ԾԻԱԾԱՆ

Փոքրիկ աղջիկն ասաց.
-Բարև՛:
Փոքրիկ տղան ասաց.
-Բարև՛:
Եվ օդի մեջ հանդիպեցին
Նոր աչք բացած երկու բարև:
Ու փարվեցին, ուրախացան
Ու թև թևի վեր բարձրացան,
Ու արևի տակ շիկացան,
Ու ամպի մեջ խոնավացան,
Ու մաղվեցին ցողերի պես,
Փայլփլեցին շողերի պես,
Դարձան շքեղ մի ծիածան:



բ) Ոչ խոսքային միջոցներով ներկայացրո՛ւ բանաստեղծությունը:

50. ա) Տառերը դասավորի՛ր ճիշտ հերթականությամբ և ստացի՛ր կարևոր բառ:




բ) Արտագրի՛ր ստացած բառը: Ը ____________________

51. ա) Նկարի՛ր  կամ լուսանկարի՛ր քո դպրոցը:

բ) Լրացրո՛ւ:

Ես սովորում եմ _______________ դպրոցում:

Իմ դպրոցը գտնվում է _______________ քաղաքում կամ գյուղում:

Իմ դասարանում սովորում է _______________ աշակերտ:

52. Մարդուկին դարձրու՛ քո «ընկերը»՝ ուրվապատկերի վրա փակցնելով նրան համապատասխանող բառեր (Հավելված 15):



53. Պատկերների մեջ գրի՛ր ընկերներիդ անունները:



54. Մարդուկին դարձրո՛ւ քո «ընկերը»՝ տողերի վրա գրելով համապատասխան հատկանիշներ:



բարի

ազնիվ

ագահ

չարաճճի

հոգատար

սրտաբաց

55. Նայի՛ր մուլտֆիլմը և պատասխանի՛ր հարցերին:

1. Ովքե՞ր էին հերոսները:
2. Ինչո՞ւ չզիջեցին իրար կենդանիները:
3. Նկարագրի՛ր ջրարջին ու նապաստակին:
4. Ովքե՞ր էին լավ ընկերներ:

56. Նամա՛կ գրիր արջին կամ եղջերվին:



Սիրելի՛ ____________________________, ձեզ գրում է _____ դասարանի աշակերտ ________________:

______________________________________________

______________________________________________

Խնդրում եմ ____________________________________

______________________________________________

57. ա) Աղյուսակում գտի՛ր քո սիրած զբաղմունքը և վերցրու՛ շրջանի մեջ:
Քեզ կօգնեն գույները:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ն | վ | ա | գ | ե | լ | ե |
| ե | ց | և | լ | թ | ե | ր |
| հ | լ | օ | պ | դ | ի | գ |
| լ | ո | ղ | ա | լ | զ | ե |
| ք | դ | հ | ր | վ | կ | լ |
| վ | ա | գ | ե | լ | ր | ր |
| ա | բ | դ | լ | գ | ու | դ |

բ) Դո՛ւրս գրիր շրջանի մեջ եղած բառերը:

58. Դիտի՛ր նկարը և օգնի՛ր երեխաներին ճիշտ որոշում կայացնել:



59. Գտի՛ր «ավելորդ» նկարը և շրջագծի՛ր:



60.Դիտի՛ր նկարները. ո՞րն է լավ, ո՞րը՝ վատ: Դի՛ր համապատասխան նշանը (+ , - ) :









61. Օգտվելով աղյուսակից՝ ասա՝ ինչով են զբաղվում այս երեխաները շաբաթվա ընթացքում:

- Ի՞նչ լավ ու վատ կողմեր ես նկատում:

- Համեմատի՛ր քո առօրյայի հետ:

| |  |  |  |  |
|---|---|---|---|---|
| **Շաբաթվա զբաղմունքները** | Զբաղվում է սպորտով | Զբաղվում է համակարգչով կամ հեռախոսով | Ժամանակ է անցկացնում ընկերների հետ | Գիրք է կարդում |
| Արամ | 5 ժ | 5 ժ | 2-4 ժ | 1-2 ժ |
| Սոնա | - | 1 ժ | 1-2 ժ | 7-8 ժ |
| Աննա | 3 ժ | 8 ժ | 1-2 ժ | - |

62. Ճամպրուկիդ մեջ դասավորի՛ր  այն իրերը, որոնք անհրաժեշտ են քեզ  ճանապարհորդելու համար (Հավելված 16):



## Իմ իրավունքները

63\. Դիտի՛ր նկարները:

Պատրաստի՛ր պատասխան քո իրավունքների մասին և ճևավորի՛ր (Հավելված 17):











ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

## Իմ պարտականությունները

64. Դիտիր   նկարները:









ա) Պատրաստի՛ր պաստառ քո պարտականությունների մասին և ձևավորի՛ր (Հավելված 18):

65. Ամբողջացրու՝ փակցնելով համապատասխան բառերը (Հավելված 19):

ԲՆՈՒԹՅՈՒՆ

66. Անվանի՛ր/ նշի՛ր այն, ինչ կենդանի է:



երիցուկ



թիթեռ



արև



քար

67. Անվանի՛ր/ նշի՛ր այն, ինչ անկենդան է:



ամպ



խխունջ



հող



մանուշակ

68. Դիտի՛ր նկարները և լրացրու՛ համապատասխան սյունակները:










| Կա բնության մեջ | Ստեղծել է մարդը |
|---|---|
| ______________ | ______________ |
| ______________ | ______________ |
| ______________ | ______________ |
| ______________ | ______________ |

69. ա) Ունկնդրի՛ր  բանաստեղծությունը:

## ԿՐԻԱՅԻ ՀՈՎԱՆՈՑԸ

Կրիա՛, չե՞ս լսում
Ամպի գոռոցը,
Գնա վերցրո՛ւ
Քո հովանոցը:
Հովանոց պետք չէ,
Ես ի՞նչ եմ անում,
Տուն-հովանոցը
Մեջքիս եմ տանում:

բ) Պատասխանի՛ր  հարցերին.

- Ո՞ւմ մասին էր բանաստեղծությունը:
- Ինչի՞ ձայնը չէր լսում կրիան:

❖ Կրիաները շատ երկար են ապրում՝ մինչև 180 տարի:

գ) Լրացրո՛ւ / փակցրո՛ւ (Հավելված 20):

Ամպը ________________________ բնություն է:

Կրիան ________________________ բնություն է:

❖ Մեր մոլորակի բնությունը հարուստ է բույսերով:

**70**. ա) Պատկերի՛ր բույսը՝ օգտվելով ուրվանկարից:



Բույսերն ունեն արմատ, ցողուն, տերև, ծաղիկ:

բ) Քո նկարած բույսի վրա փակցրո՛ւ համապատասխան բառը (Հավելված 21):

- Բնության մեջ կան շատ տարբեր բույսեր, ծառեր, թփեր:
- Թփերն  ավելի ցածր են ծառերից:

| Սա ծառ է: | Սա թուփ է: |
| --- | --- |
|  |  |

71. ա ) Քո շրջապատում գտի՛ր որևէ ծառ և լուսանկարի՛ր:

Պատկերի՛ր քո լուսանկարած ծառը:

72. Դիտի՛ր նկարները և լրացրո՛ւ:



Եղևնին ______________ է:



Մասրենին ______________ է:



Վարդը ______________________ է:

73. ա) Ունկնդրի՛ր  բանաստեղծությունը:

**ՄԻ ՕՐՈՎ ԷԼ ՄԵԾԱՑԱ**

Պատվական Խաչատրյան

Երկինքն ասաց՝
Արև կտամ,
Ու տվեց,
Արևն ասաց՝ բարև կտամ,
Ու տվեց,
Ծաղիկն ասաց՝ քեզ բույր կտամ,
Ու տվեց,
Հովիկն ասաց՝ համբույր կտամ,
Ու տվեց,
Դպրոցն ասաց՝ քեզ լույս կտամ,
Ու տվեց,
Լույսը ասաց՝ քեզ հույս կտամ,
Ու տվեց...
Այսպես մի քիչ բոյ քաշեցի,
Բարձրացա,
Եվ աշխարհում մի օրով էլ
Մեծացա:



74. ա) Դասարանում աճեցրու որևէ բույս՝ հետևելով տրված քայլերին:

1. թաղարի հողը փխրեցրու,
2. հողի մեջ փոքրիկ փո՛ս արա,
3. սերմը տեղադրի՛ր փոսիկի մեջ,
4. հողը հարթեցրու,
5. տեղադրի՛ր բույսը լուսավոր սենյակում,
6. ջրի՛ր, որ շուտ մեծանա:

բ) Ասա ՝ ինչ խնամք է անհրաժեշտ, որ բույսը լինի առողջ ու փարթամ:

Արև, ջերմություն, օդ, ջուր, լույս:



# ՃԱՆԱՉԵՆՔ ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Մեր մոլորակի բնությունը հարուստ է կենդանիներով:

Անվանի՛ր կենդանիներին:




























❖ Բոլոր կենդանիներն ապրում են Երկրի վրա, որտեղ նրանց կյանքի համար կան անհրաժեշտ պայմաններ:




❖ Երկրի վրա խիստ բազմազան են նաև կենդանիների կյանքի պայմանները:

75. Որտե՞ղ են ապրում նկարներում պատկերված կենդանիները:

Սլաքներով միացրո՛ւ համապատասխան պատկերները:

















- Երկրի վրա բույսերն ու կենդանիները ապրում են կողք կողքի։
- Բույսերը որոշ կենդանիների համար ծառայում են իբրև սնունդ։
- Բուսակեր կենդանիները սնվում են բացառապես բուսական սննդով՝ հիմնականում կանաչ բույսեր և խոտ։

76. Ասա/ նշի՛ր, թե նկարներում պատկերված որ կենդանիներն են սնվում բույսերով։



☐



☐



☐



☐

77. Դիտի՛ր նկարները: Ասա՛, թե որ կենդանին ինչով է սնվում:



❖ Մեր մոլորակի ամենամեծ կենդանին կապույտ կետն է:



Ամենախոշոր թռչունը աֆրիկյան ջայլամն է:



Ամենաբարձրահասակ կենդանին ընձուղտն է:



78. Ունկնդրի՛ր հանելուկները և կռահի՛ր:

Այն ի՞նչն է, ինչը՞...

Երկու սիրուն աչիկ ունի,
Մկրատաձև պոչիկ ունի,
Կուրծքն սպիտակ կաթի նման,
Թևերը սև՝ սաթի նման:



/ծիծեռնակ/

Խորամանկ է, արագավազ,
Պոչը երկար ու թավամազ,
Գյուղ է մտնում նա կամացուկ,
Հավ ու աքլոր տանում ծածուկ:



/աղվես/

Ամեն տարի վաղ գարունքին
Նա իր բույնն է դառնում կրկին,
Որսում է օձ, գորտ ու մկներ,
Բարեկամն է վաղուց նա մեր:



/արագիլ/

Կա մի հսկա կենդանի,
Ե՛վ խելացի, և՛ բարի,
Յոթը տարին մի անգամ
Ձագ է տալիս աշխարհին:



/փիղ/

79. Յուրաքանչյուր կանոնի դիմաց փակցրո՛ւ համապատասխան նկարը (Հավելված 22):

Անտառում կրակ չենք վառում:

Տնկում ենք ծառեր:

Չենք կոտրում ծառի ճյուղերը:

Պատրաստում ենք թռչունների բներ:

# ՄԵՐ ԿԱՆԱՉ-ԿԱՊՈՒՅՏ ՄՈԼՈՐԱԿԸ

80. Գրիր/ փակցրու՝ օրվա որ պահն է պատկերված: ______________________
(Հավելված 23)



81.Գրիր/ փակցրու՝ օրվա որ պահն է պատկերված: ______________________
(Հավելված 23)



82. Անվանի՛ր պատկերները:







**Արև** **Լուսին** **աստղեր**

83. Ամբողջացրո՛ւ պատկերը (Հավելված 24):



84. Ամբողջացրու  պատկերը (Հավելված 25):



85. ա) Դիտի՛ր նկարը: Անվանի՛ր պատկերները:




բ) Լրացրո՛ւ:

______________________________ մոլորակը մեր տունն է:

86. Սա գլոբուս է:



Նշումների համար

## Հավելված 1













## Հավելված 2




Հավելված 3

նկարել

զանգել

լվացվել

ծեփել

հաշվել

խաղալ

լուսանկարել

գրել

Հավելված 4













Հավելված 5

աշխատասեր էր

ծույլ էր

դժվարությունից վախենում էր

Հավելված 6

Երկուշաբթի

Երեքշաբթի

Չորեքշաբթի

Հինգշաբթի

Ուրբաթ

Շաբաթ

Կիրակի

Հավելված 7

| | | |
|---|---|---|
| գլուխ | մազեր | աչք |
| ականջ | քիթ | բերան |
| լեզու | ատամ | ձեռք |
| ոտք | մատներ | հոնքեր |

Հավելված 8

| | | |
|---|---|---|
| Շոշափելիքի | Լսողության | Հոտի |
| Տեսողության | Համի | |

Հավելված 9



Հավելված 10







Հավելված 11






















Հավելված 12

















Հավելված13









Հավելված 14













Հավելված 15

ագահ

սրտաբաց

հոգատար

ազնիվ

բարի

բարեկիրթ

կռվարար

չարաճճի

Հավելված 16


Լոգանքի
գել




ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՆՁՆԱԳԻՐ
REPUBLIC OF ARMENIA
PASSPORT


Ատամի
մածուկ


Օճառ
baby
Mydełko
0+
HYPOALERGICZNE









Ես սովորում եմ:

Ես ցուցահանդես եմ գնում:

Ես խաղում եմ:

Ես առողջ եմ սնվում:

Ես լվացվում եմ:

Ես ընկերներ ունեմ:

Ես օգնում եմ մեծերին:

Ես աղբը գցում եմ աղբամանի մեջ:

Հավելված 19

արև

սար

աստղ

կենդանի

թռչուն

քար

գետ

բույս

Հավելված 20

անկենդան

կենդանի

Հավելված 21

ցողուն

արմատ

տերև

ծաղիկ

Հավելված 22









Հավելված 23

| | |
|---|---|
| գիշեր | ցերեկ |

Հավելված 24






Հավելված 25

**Մանուկյան Մ.Ռ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.**

# ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 3

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

**Հանրակրթական ուսումնական հաստատությունների**
**երրորդ դասարանի սովորողների համար**

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ.Մալյան 43